«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝

Ա. Վ. ԳՈՒԳՈՐՅԱՆ

17 մարտի 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Օվսաննա Լևոնի Նահապետյանի Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Մարդու սոցիալ-մշակութային կեցությունը արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՏՀ հասարակագիտության ամբիոնի 2026 թ. ապրիլի 27-ին կայացած նիստում: Նիստին ներկա էին հասարակագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն. Գ. Սուքիասյանը, ամբիոնի թվով 37 դասախոսները և նիստի քարտուղար Ռ. Գ. Ավետիսյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տեխնածին քաղաքակրթությունը փոխեց աշխարհի բնույթը, հասարակության զարգացման վեկտորը, որոնք սկզբունքային դեր կատարեցին ժամանակակից մարդու գոյության և էության ավանդական պատկերացումներում, որովհետև մարդու ստեղծածը դուրս եկավ մարդու դեմ, արարվածը ըմբոստացավ Արարչի դեմ: Ամենայն սրությամբ առաջին պլան մղվեց «Ով է Մարդը» կանտյան հարցադրումը, ո՞րն է մարդու անելիքն այս աշխարհում, կամ այլևս անելիք ունի արդյոք, ինչ է սպասվում նրան ապագայում կամ մարդն ապագա ունի՞ ընդհանրապես: Այս հարցադրումները փիլիսոփայության, հումանիտար գիտությունների և առհասարակ հումանիստական մտածողության առջև դնում են մի շարք կարևոր խնդիրներ՝ նորովի հասկանալ ու մեկնաբանել.«թե ինչ է նշանակում մարդ լինել և ինչպես պահպանել նրա գոյաբանական ամբողջականությունը մի աշխարհում...որտեղ մարդու ամենօրյա կյանքն ու կենսագործունեությունը առլեցուն է տեխնածին (արհեստական ինտելեկտ, արհեստական ճանապարհով ստեղծված համաճարակի բացիլներ, կիբերխարդախություն և այլն), սոցիալ-մշակութային (արհեստական սոցիալականություն, կեցության թվայնացում, վիրտուալ աշխարհ, ինքնության ճգնաժամ, լուսանցքային մարդ, սոցիալական դերի ու դիմակի սերտաճում և այլն), մարդաբանական (կենսատեխնոլոգիական միջամտություն, սեռի փոփոխություն, մարմնի ապակենսաբանականացում և այլն), գոյութենական (լքվածություն, տագնապ, կյանքի իմաստ, կիբեռնետիկական անմահություն և այլն/, այլ կերպ ասած՝ գոյաբանական

այս հպանցիկ բարձրաձայնումն արդեն իսկ ակնհայտ են դարձնում թեմայի արդիականությունը և ուսումնասիրության հրատապությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Տեխնածին քաղաքակրթության պայմաններում ապրող մարդու գոյության խնդիրներով զբաղվել են էքզիստենցիալիզմը, ստրուկտուրալիզմը, հերմենևտիկան, հետմոդեռնիզմն ու մետամոդեռնիզմը, բազմաթիվ անհատ փիլիսոփաներ, հումանիստական կողմնորոշում ունեցող մտածողներ: Շարունակելով այդ գիծը ատենախոսը տեսնում է հիմնախնդիրներ, հիմնախնդրի առանձին բաղադրիչներ, որոնք լրացուցիչ ուսումնասիրության ու մեկնաբանության կարիք ունեն: Մասնավորապես՝ արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում վերլուծել.

1. Մարդու կեցության փոխակերպումների պատճառներն ու հետևանքները, որոնք հնարավորություն կտան առանձնացնել, հասկանալ, ուսումնասիրել և գնահատել.

ա) մարդու կեցությունը «երկակի իրականությունների» աշխարհում,

բ) մարդու սոցիալ-մշակութային դիմանկարի այլակերպումները:

Թվարկածներից բխում են հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Վերլուծել սահմանի գոյաբանական կարգավիճակը և հիմնավորել սահմանազանցական գործունեությունը:

2. Ուսումնասիրել ապակառուցողական սահմանազանցման սոցիալ-մշակութային շարժառիթները:

3. Վիրտուալ գոյաբանության համատեքստում վերլուծել կեղծանմանակների աշխարհի մարդու սոցիալ-մշակութային դիմանկարը:

4. Սոցիալականը դիտարկել որպես բեմականացված կեցություն և վերլուծել «դիմակով մարդու» սոցիալ-մշակութային էությունը:

5. Սոցիալ-մշակութային կեցության լուսանցքում վերլուծել «ավելորդ մարդու» կերպարը:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսությունում բարձրացվում են գիտական նորույթ պարունակող դրույթներ, որոնցից են.

1. Հիմնավորել այն թեզը, որ սահմանազանցումը կարող է դրսևորվել որպես բարոյական հենարաններից զրկված մարդու ինքնանպատակ ընդվզում:

2. Հիմնավորել այն դրույթը, որ սոցիալական կյանքի թվայնացման, վիրտուալ աշխարհի ձևավորման, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի և վիրտուալ աշխարհին բնորոշ կենսաձևերի տարածմանը համընթաց ձևավորվում է գոյության այլընտրանքային ոլորտ՝ վիրտուալ աշխարհ, որում մարդն աստիճանաբար տարալուծվում է վիրտուալ համայնապատկերի մեջ և վերածվում «թվային քոչվորի» (ատենախոսություն, էջ 10):

3. Այն միտքն է հիմնավորվում, որ սոցիալ-մշակութային իրողություններում սոցիալական կարգավիճակ, դերակատարում ունեցող մարդը իրական «Ես»-ը փոխարկում է դերասանական «Ես»-ի, վերածվում սոցիալական գործակալի, որը տարբեր իրավիճակներում կարող է ունենալ տարբեր սոցիալական ճակատագիր:

4. Այն տեսակետն է հայտնում, որ զանգվածային մշակույթը աստիճանաբար ձևավորում է «գեղապաշտ մարդու» սոցիալ-մշակութային տարատեսակ, որը կյանքն ընկալում է որպես իմաստային լիցքեր չունեցող տեսարժան պատկերների ցուցադրման բեմահարթակ:

5. Հիմնավորում է այն դրույթը, որ ժամանակակից տեխնածին քաղաքակրթությունը ձևավորում է անդեմ մարդկանց բազմություն, ամբոխ և ամբոխի մարդ, որը կարծես ապրում է ստանդարտ վարքագիծ թելադրող զորանոցում:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (յուրաքանչյուրը 4 ենթագլուխ), եզրակացությունից և գրականության ցանկից: Անետախոսությունը շարադրված է 162 էջի վրա:

Առաջին գլխի («Մարդու սոցիալական կեցությունը «երկակի իրականությունների» աշխարհում) բովանդակության վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնել փիլիսոփայական-աշխարհայացքային նշանակության հետևյալ դրույթները.

1. Սահմանազանցումը ժամանակակից մարդու գոյության առանցքային եղանակն է, որով նա փորձում է հաղթահարել իր սահմանափակվածությունը, գոյության պայմանավորված և պարտադրված նորմերը, որոնք դառնում են մշակույթի և քաղաքակրթության շարժիչ ուժը:

2. Սահմանազանցումը և՛ ազատագրում է, և՛ ենթարկում: Ազատագրում է այնքանով, որքանով քանդում է հինը, ենթարկում՝ երբ կառուցում է նորը:

3. Ապակառուցողական վարքը բնական ու սոցիալական աշխարհի հետ մարդու փոխհարաբերության ներքին գոյաբանական պահանջների արտահայտությունն է:

4. «Ապագոյաբանականացումը» որոշակի գոյակերպի կորուստ է կամ նահանջ նրանից: Ապագոյաբանականացման ընթացքում մարդը կորցնում է իր կեցության հիմնարար, էութենական հիմքերը:

5. Հետարդիականության շրջանում մարդու սոցիալական կամ իրական գոյությունը փոխարինվում է գոյության պատրանքով, իսկ մարդը՝ իր թվային կեղծանմանակով:

Երկրորդ գլխի («Մարդու սոցիալ-մշակութային դիմանկարի այլակերպումները հետարդիականության համատեքստում») բովանդակություն հետ ծանոթացումը հնարավորություն է տալիս արձանագրել մշակութափիլիսոփայական հետևյալ պնդումները.

1. Մարդու սոցիալական կյանքը դիտվում է որպես բեմ, որտեղ անհատը միաժամանակ կատարում է «դերասանի» և «հանդիսատեսի» գործառույթ: Դիմակները թույլ են տալիս փորձարկել տարբեր ինքնություններ, զբաղեցնել նոր սոցիալական տարածքներ և իրականացնել սեփական կյանքը որպես ինքնաբեմադրություն:

2. Համցանցը և վիրտուալ միջավայրը խորացնում են մարդու օտարումը, խախտում իրականի և երևակայականի սահմանները, սրում «Ես»-ի ու դիմակի հակասությունը:

3. Ժամանակակից գեղագիտական մշակույթը ձևավորում է «գեղապաշտ մարդուն», որի արդյունքում նման մարդու ներքին արժեքներն ու իրական սոցիալական կապերը աստիճանաբար իմաստազրկվում են, իակ անհատը սոցիալական և էքզիստենցիալ իմաստով «մահանում» է, դառնում «զորանոցային մարդ»:

4. Տեխնոլոգիական առաջընթացը և սպառողական մտածողությունը ստեղծել են այնպիսի հասարակություն, որտեղ կարելի է աշխատել չաշխատելով, գոյատևել առանց ստեղծելու, վաստակել առանց արժեք ավելացնելու: Ձևավորվում է անգործության մշակույթ, որը սպառնում է մարդու՝ որպես արարող էակի գոյությանը:

5. Տեխնիկան և սպառողական քաղաքակրթությունը ստեղծել է «ավելորդ մարդու» կերպարը, որը մերժվում է սոցիալական համակարգի կողմից, չի գտնում իր տեղը կյանքում, որի արդյունքում ապրում է լուռ ապստամբություն, ներքին հոգնածություն և անորոշ հաշտության վիճակ, որը սոցիալականից բացի, նաև գոյաբանական վիճակ է:

Ատենախոսության այս համառոտ վերլուծությունը ցույց է տալիս , որ.

1. Հեղինակը տիրապետում է թեմային, նրա նրբություններին, ներքին շերտանստվածքներին: Ստեղծվել է կուռ, ամբողջական, բազմաթիվ կողմերով նորովի գործ և լրացուցիչ աշխատանքի դեպքում այն կարելի հրատարակել որպես մենագրություն:

2. Ատենախոսության բոլոր բաժիններում կարելի է հանդիպել խորքային և գրեթե սպառիչ վերլուծությունների, դիրքորոշումների:

3. Տեքստը շարադրված է գրական հայերենի պատշաճ իմացությամբ և այդ իմացության մեջ փիլիսոփայական մտածողության յուրահատկության հմուտ ներկայացմամբ:

4. Ատենախոսությունը լի է բազմաթիվ հետաքրքիր, մտածելու տեղի տվող մտքերով: Թվարկենք մի քանիսը.

ա) «...մեր օրերում տեղեկացվածությունը շատ հաճախ նույնացվում է կրթվածության հետ, ինչը ստվերում է մտածական ունակությունների, իրական գիտելիքի դերն ու նշանակությունը» (ատենախոսություն, էջ 60):

բ) «Եթե ավանդական հասարակություններում մարդը գիտելիքը կրում էր իր մեջ, ապա այսօր այն «կրում է» իր հետ, ինչի վկայություն կարելի է համարել տեղեկատվական ծավալ պարունակող սարքերը (համակարգիչ, կրիչ և այլն), որոնց ժամանակակից անհատը վստահել է իր միտքն ու գործունեությունը» (նույն տեղում):

գ) «...մարդը պետք է հասկանա, որ եթե չկանխի արդի գիտական առաջընթացի թերևս իր համար «բացասական բեմադրությունը» և չհստակեցնի իր տեղը համընդհանուր փոփոխությունների հոսքում, ապա որպես կեցության կոնկրետ ձև կարող է անհետանալ, քանի որ այնպիսի տպավորություն է, թե աշխարհի ավարտը դատապարտված է լինելու գիտական» (ատենախոսություն, էջ 63):

դ) «Շուտով մարդկային ցեղի ճակատագիրը կախված է լինելու մեքենաների ողորմածությունից, որովհետև հասարակության առջև ծառացած խնդիրները դառնում են ավելի ու ավելի բարդ, իսկ մեքենաներին՝ ավելի ու ավելի խելացի» (նույն տեղում) և այդպես շարունակ:

5. Ատենախոսը օգտագործում է հասկացություններ, որոնք հանգիստ կարող են օգտագործվել որպես թևավոր մտքեր: Դրանցից են «ապակառուցողական սահմանազանցում», «նախասահմանվածի կառուցողական ընդվզում», «հետկենսաբանական մարդ», «կեղծանմանակումների աշխարհ», «թվային քոչվոր», «բեմականացված կեցություն», «աշխատել չաշխատելով», «լուռ ապստամբություն», «զորանոցի մարդ», «գեղապաշտ մարդ», «ավելորդ մարդու կերպար» և այդպես շարունակ:

Ատենախոսությունում ներկայացված ընդհանրություններն ու եզրակացությունները

Ատենախոսը հրապարակային բնութագրման է ներկայացրել հետևյալ ընդհանրացումներն ու եզրակացությունները.

1. Իր իսկ կերտած աշխարհում էքզիստենցիալ անկախության հասնելու համար մարդու գործունեությունը դառնում է սահմանազանցական, որով նա կարողանում է հաղթահարել գոյաբանական կարգի սահմանափակումները և դառնալ կյանքի ակտիվ ստեղծարար սուբյեկտ:
2. Մարդու սահմանազանցման գործունեությունը կարող է ապակառուցողական դրսևորումներ ունենալ, որը կարելի է դիտել որպես մետաֆիզիկական բացառում ենթադրող ընկզման տարատեսակ:
3. Ժամանակակից ցանցային քաղաքակրթության ստեղծած վիրտուալ իրականության մարդը վերածվում է «թվային քոչվորի», ձևավորվում է մարդու մի տարատեսակ, ում մտածողությունը սնվում է ոչ թե անմիջական զգայություններից, այլ թվային ալգորիթմներից:
4. Ժամանակակից զանգվածային մշակույթն ու սպառողական հոգեբանությունը ձևավորում են միակերպ ու միաչափ անհատականությունը, որը ծնում է «զորանոցային մարդուն», որը փոխարկվում է «ոմն մեկի» (ատենախոսություն, էջ 151):
5. Մարդակենտրոն գոյաբանական ճգնաժամի պայմաններում ձևավորվում է հանրային կյանքից օտարված, լքված ու անգործության մատնված «ավելորդ մարդկանց» սոցիալական ենթաշերտ, որոնց կարելի է բնութագրել որպես կյանքի կողմնակի ու կրավորական դիտորդների, «որոնք գոյում են չլինելով պահանջված» (ատենախոսություն, էջ 152):

Թվարկածներն էլ բավարար են համոզվելու, որ մենք գործ ունենք լուրջ, գիտական առումով պատշաճ ուսումնասիրության հետ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Այս ամենով հանդերձ ատենախոսությունում տեղ են գտել առարկելի դիրքորոշումներ, տեսակետներ, մտքեր, մոտեցումներ:

1. Թեման ճնշել է հեղինակին, ազդել նրա աշխարհայացքային դիրքորոշման վրա, որի արդյունքում ատենախոսության մեջ իշխող են դարձել հոռետեսական ու հայտնատեսական (ապոկալիպտիկ) տրամադրությունները: Քանի որ ատենախոսությունը վերաբերում է արդի մարդահրավերների համատեքստում մարդու սոցիալ-մշակութային կեցությանը, իսկ մարտահրավերների մեջ հեղինակը միայն սոցիալապես բացասական հետևանքներն է տեսել, ուստի ներկայացրել է մարդու ապագայի համար վտանգավոր նշանակություն և դրսևորում ունեցող քաղաքակրթական գործոնները և վկայակոչել միայն այն հեղինակներին, որոնք մարդու վերջի, ոչնչացման, մարդու կործանիչ, ապակառուցողական դերի և բնութի մասին են խոսում (Է. Ֆրոմ, Ն. Թիմբերգին և ուրիշներ): Թվարկենք միայն մի քանի օրինակ.

-«...ապրել նշանակում է ոչնչանալ» (ատենախոսություն, էջ 33-34),

-«Մարդը յուրահատուկ է նրանով, որ զանգվածային մարդասպանի տեսակ է և միակն է, որ պիտանի չէ հասարակությանը» (նույն տեղում, էջ 35):

-մարդը «անձնական դաժանությամբ և վայրագությամբ համակված գիշատիչ և կործանարար ուժ է (նույն տեղում, էջ 40):

-մարդը «գիտակցաբար կարող է ֆիզիկապես և բարոյապես վնաս պատճառել՝ միաժամանակ ունենալով բավարարվածություն և սեփական արդարության զգացում» (նույն տեղում, էջ 35):

-«...մենք էլ պետք է փաստենք, որ պատմական իմաստով «սոցիալական մարդը» ոչ այնքան հեռու անցյալի արարվածք է և նույնքան հնարավոր է, որ նա մի օր կարող է անշշուկ ու անորսալի կերպով անհետանալ» (ատենախոսություն, էջ 72) և այդպես շարունակ:

Կարծում ենք, որ նմանաբնույթ հետազոտություններում կարևոր դեր է կատարում հեղինակի աշխարհայացքային և մեթոդաբանական այն մեկնանակետը, որով սկսում է մարդու գործունեության գնահատումը: Եթե այդ մեկնակետը մարդու ապակառուցողական, ավերիչ ուժ ներկայացնելն է, ապա հեղինակը և բոլոր նրանք ում վկայակոչում է, իրավացի են: Բայց մարդը նաև արարող է, ստեղծող, քիչ չեն այն մարդիկ, ովքեր երկրի աղն են հանդիսացել, իրենց գոյությամբ իմաստ տվել տիեզերքին: Ցավոք այս կողմի վրա ատենախոսը քիչ է ուշադրություն դարձրել: Կարծում ենք դրա պատճառներից մեկն էլ այն է, որ հեղինակը իր ուշադրությունը կենտրոնացրել է հետարդիականության փիլիսոփայությանը (որտեղ իշխող են հոռետեսությունը, նիհիլիզմը և ցինիզմը), եթե մի քիչ մոտենար մեր օրերին և անդրադառնար մետաարդիականությանը, ապա կնկատեր, որ վերջինս հոգնածությունն ու անդրադարձն է հետարդիականության հոռետեսությանը և նիհիլիզմին:

2. Ատենախոսությունում տեղ են գտել նաև առարկելի մտքեր, տեսակետներ: Թվարկենք միայն մի քանիսը.

ա) Ատենախոսը գրում է, որ «...բնական ու սոցիալական աշխարհի վերափոխման նպատակով ծավալված ցանկացած գործունեություն ապակառուցողական է, քանի որ դրա արդյունքում գործող բնական ու սոցիալական կարգ է փլուզվում» (ատենախոսություն, էջ 33): Նման մոտեցման դեպքում մարդկության քոչվոր վիճակից դուրս գալու ցանկացած քայլ պետք է ապակառուցողական համարել, քանի որ կայունացած, որոշակի հարաբերությունների ձև ստացած կարգ է փլուզում, իսկ դա նշանակում է, որ լավագույնը պետք է համարել քարանձավային մարդու կարգավիճակը, որովհետև նա փլուզելու ոչինչ չուներ:

բ) «Հարկ է նկատել նաև,-գրում է ատենախոսը,-որ կյանքը մշտապես ստեղծագործ աշխատանք է, և արարումն անհնար է առանց ոչնչացման» (ատենախոսություն, էջ 33): Առարկելի է նախադասության երկրորդ հատվածը, որովհետև ոչնչացումը նաև վերառում է, որն ապահովում է ժառանգորդումը, կապը տարբեր սերունդների միջև, հակառակ դեպքում սերունդները միմյանց չէին հասկանա:

3. Արդեն նշվեց, որ ատենախոսությունը շարադրված է գրական հայերենի պատշաճ իմացությամբ, փիլիսոփայական տեքստերն ու մտածողությունը հայերենով ներկայացնելու գովելի ունակությամբ: Բայց ատենախոսությունում քիչ չեն (եթե ասելու չլինենք՝ շատ են) երկար, ելեջներով պարուրված, երկարաշունչ նախադասություններ, որոնք լրացուցիչ դժվարություններ են ստեղծում և՛ տեքստը ընթերցելու, և՛ ասելիքը համարժեք ընկալելու առումներով (էջեր չենք նշում, որովհետև դրանք ամենուր են):

4 Նշեցինք, որ ատենախոսությունում քիչ չեն թևավոր մտքեր պարունակող ձևակերպումները: Վատ չէր լինի եթե դրանք ուղեկցվեին լրացուցիչ բացատրություններով (մեկնաբանություններով):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերություններն ու առարկելի մտքերը չեն ստվերում այն բարեխիղճ աշխատանքը, որ կատարել է ատենախոսը:

Ատենախոսությունում օգտագործվել են համեմատության, պատմականության, համանմանության, վերլուծության և համադրության մեթոդները:

Ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն՝ կարող է համալրել և հարստացնել փիլիսոփայության տեսական բազան, կարևոր դեր կատարել մշակութային, սոցիալական, էթնիկական ինքնությանը վերաբերող ուսումնասիրություններում, օգտագործվել «փիլիսոփայություն», «սոցիալական փիլիսոփայություն», «քաղաքագիտություն», «փիլիսոփայական մարդաբանություն», «մշակութային մարդաբանություն» դասընթացներում որպես ուսումնաօժանդակ նյութ:

Օվսաննա Լևոնի Նահապետյանի «Մարդու սոցիալ-մշակութային կեցությունը արդի գոյաբանական մարդաիրավերների համատեքստում» ատենախոսությունը գիտական արժեք ունեցող ամփոփ աշխատանք է, որը կարող է օգնել փիլիսոփայությամբ, մշակութաբանությամբ, քաղաքագիտությամբ, փիլիսոփայական մարդաբանությամբ զբաղվողներին հետազոտական և դասախոսական աշխատանքներում:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի հրատարակած 9 հոդվածներում (որոնց ցանկը ներկայացված է սեղմագրում):

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հետևաբար **«Մարդու սոցիալ-մշակութային կեցությունը արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում»** թեմայով ներկայացված ատենախոսությունը բավարարում է Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Օվսաննա Լևոնի Նահապետյանը** արժանի է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է ՀՊՏՀ հասարակագիտության ամբիոնի 2026 թ. ապրիլի 27- ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 8):

Հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ.՝ Ա. Հ. Սարգսյան

Հասարակագիտության ամբիոնի դոցենտ, փ.գ.թ.՝ Յու. Հ. Հովականյան

Հասարակագիտության ամբիոնի դոցենտ, փ.գ.թ.՝ Է. Կ. Նիկողոսյան

Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր, իր. գիտ. դ.՝ Ն. Գ. Սուքիասյան.

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ Լ.Ջ. Պարբինյան

27. 04. 2026 թ.